

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2019 թվականի N - Ն

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ռ ո շ ու մ է.

1. Հայտարարել պահեստազորի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ երկու ամիս ժամկետով՝ 2019 թվականի մայիսի 1-ից մինչև հունիսի 30-ը:
2. Վարժական հավաքները հայտարարվում են պահեստազորում հաշվառված քաղաքացիների՝

1) ռազմական ունակությունների կատարելագործման,

2) մասնագիտական վերապատրաստման,

3) մասնագիտական պատրաստման,

4) բարձրագույն կրթություն ունեցող ենթասպայական կազմից պահեստազորի սպաների պատրաստման նպատակով:

3. Վարժական հավաքներին ներգրավվել ընդհանուր թվով 451 քաղաքացիների, որոնցից 375-ը՝ շարքային կազմի, 20-ը՝ ենթասպայական կազմի, 56-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ:

4. Սահմանել, որ վարժական հավաքներին ներգրավվում են.

1) մոտոհրաձգային մասնագիտություններով՝ 110 պահեստազորային՝ հունիսի 15-ից 24-ը ներառյալ,

2) հրթիռա-հրետանային մասնագիտություններով՝ 81 պահեստազորային՝ մայիսի 10-ից 16-ը ներառյալ, 18 պահեստազորային՝ հունիսի 17-ից 23-ը ներառյալ,

3) հակաօդային պաշտպանության մասնագիտություններով՝ 10 պահեստազորային՝ հունիսի 17-ից 23-ը ներառյալ,

4) կապի մասնագիտություններով՝ 70 պահեստազորային՝ մայիսի 15-ից 21-ը ներառյալ, 4 պահեստազորային՝ հունիսի 17-ից 26-ը ներառյալ,

5) հետախուզական մասնագիտություններով՝ 20 պահեստազորային՝ մայիսի 13-ից 22-ը ներառյալ, 28 պահեստազորային՝ մայիսի 20-ից 29-ը ներառյալ,

6) ռադիոէլեկտրոնային պայքարի մասնագիտություններով՝ 44 պահեստազորային՝ հունիսի 17-ից 23-ը ներառյալ,

7) տեխնիկական մասնագիտություններով՝ 40 պահեստազորային՝ հունիսի 3-ից 9-ը ներառյալ,

8) թիկունքային մասնագիտություններով՝ 20 պահեստազորային՝ մայիսի 20-ից 29-ը ներառյալ,

9) տեղագրական մասնագիտություններով՝ 6 պահեստազորային՝ հունիսի 13-ից 22-ը ներառյալ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019թ.

Երևան